ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ

2019 **թվականի ներդրումային գործունեության**

մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2020

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան……3

ԲԱԺԻՆ 1.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները……4

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը……4

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……5

ԲԱԺԻՆ 2.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2019 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……6

2.1 Բազմակետ տեսակոնֆերանսի համակարգի ձեռքբերմանն ուղղված ներդրումներ……6

2.2 Անխափան սնուցման սարքերի ձեռքբերմանն ուղղված ներդրումներ……6

2.3 Օդորակիչների ձեռքբերմանն ուղղված ներդրումներ……6

ԲԱԺԻՆ 3.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի հետագա սակագներով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……7

Հղումներ օգտագործված նյութերին……8

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի դեկտեմբերի 18-ի №470Լ որոշումով հաստատված 2019 թվականի աշխատանքային ծրագրի 23-րդ կետի և արտացոլում է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ներդրումային ծրագրի և փաստացի կատարված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության Ներդրումային ծրագիրը [Որոշում] և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված 2019 թվականին երրորդ եռամսյակի փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվությունը [Հաշվետվություն]՝ քանի որ ներդրումներն ամբողջ ծավալով ավարտվել են երրորդ եռամսյակի ընթացքում:

ԲԱԺԻՆ 1.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի 2019 թվականի Ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը

Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր իրականացնել բազմակետ տեսակոնֆերանսի համակարգի, անխափան սնուցման սարքերի և օդորակիչների ձեռք բերման և տեղադրման աշխատանքներ: Ներդրումային ծրագրի ընդհանուր ծավալը կազմել է 5,1[1] մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է Ընկերության Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից, ներդրումների մեծ մասը՝ շուրջ 74%-ը, նախատեսված էր բազմակետ տեսակոնֆերանսի համակարգի ձեռքբերման և տեղադրման համար, հաջորդ հատվածը՝ շուրջ 14%-ը, օդորակիչների ձեռք բերման և տեղադրման համար և 12%-ը՝ անխափան սնուցման սարքերի ձեռք բերման համար:

[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

1.2 **Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները**

Համաձայն Ընկերության փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ 2019 թվականի ընթացքում իրականացվել և շահագործման են հանձնվել 3 431,3 հազար դրամի ներդրումներ:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	**Ներդրումների ուղղությունները**	**Հանձնաժողովի հետ համաձայնեցված** 2019 **թվականի ներդրումների կանխատեսվող ծավալը**		2019 **թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը**		**Ներդրու-մային ծրագրի կատարման ցուցանիշը**
		հազ. դրամ	%	հազ. դրամ	%	%
1	Բազմակետ տեսակոնֆերանսի համակարգի ձեռք բերում և տեղադրում	3 800.0	74.4%	2 820.4	82.2%	74.2%
2	Անխափան սնուցման սարքերի ձեռքբերում	585.0	11.5%	182.5	5.3%	31.2%
3	Օդորակիչների ձեռքբերում և տեղադրում	720.0	14.1%	428.4	12.5%	59.5%
4	**Ընդամենը**	5 105.0	100%	3 431.3	100%	67.2%

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 1-ից՝ ամբողջ ներդրումների ուղղությամբ ծախսերը կատարվել են 67,2%-ով, սակայն անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունը 2019 թվականի Ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացրել է ամբողջ ծավալով՝ նախատեսվածից 32,8% ցածր արժեքով:

ԲԱԺԻՆ 2.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի
2019 **թվականի ներդրումային գործունեության**
մոնիթորինգի արդյունքները

2.1 **Բազմակետ տեսակոնֆերանսի համակարգի ձեռքբերմանն ուղղված ներդրումներ**

Այս ենթաուղղությամբ Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում էր իրականացնել 3 800,0 հազար դրամի ներդրումներ:

Նախատեսված էր 2 884,2 հազար դրամով ձեռք բերել 30 կետի համար մեկ կոմպլեկտ տեսակոնֆերանսի համակարգ, 739,5 հազար դրամով՝ երկու հեռուստացույց և 176,4 հազար դրամով՝ պրոյեկտորի մեկ էկրան :

Համաձայն Ընկերության կողմից ներկայացրած 2019 թվականի փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ նշված ձեռքբերումներն իրականացվել են համապատասխանաբար՝ 2 192,7, 546,1 և 81,6 հազար դրամով, արդյունքում Ընկերությունը խնայել է 979,6 հազար դրամ:

2.2 **Անխափան սնուցման սարքերի ձեռքբերմանն ուղղված ներդրումներ**

Այս ենթաուղղությամբ Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում էր իրականացնել 585,0 հազար դրամի ներդրումներ:

Համաձայն ներկայացված փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ 182,5 հազար դրամով ձեռք են բերվել ներդրումային ծրագրով նախատեսված 10 հատ անխափան սնուցման սարքերը, արդյունքում Ընկերությունը խնայել է ևս 402,5 հազար դրամ:

2.3 **Օդորակիչների ձեռքբերման և տեղադրմանն ուղղված ներդրումներ**

Այս ենթաուղղությամբ Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում էր իրականացնել 720,0 հազար դրամի ներդրումներ:

Համաձայն ներկայացված փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին հաշվետվության՝ 428,4 հազար դրամով Ընկերության կողմից ձեռք են բերվել և տեղադրվել նախատեսված 4 օդորակիչները: Այս ենթաուղղությամբ ևս փաստվել է խնայողություն 291,6 հազար դրամ ծավալով:

ԲԱԺԻՆ 3.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի հետագա սակագներով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի որոշման նպատակով վերլուծության ընթացքում իրականացվել են հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալների համադրում: Արդյունքում, պարզվել է, որ Ընկերության կողմից Ներդրումային ծրագրի շրջանակում ամբողջ ձեռքբերումները իրականացվել են նախատեսվածից շուրջ 1 673,7 մլն դրամ ցածր արժեքով:

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները, ստորև՝ աղյուսակ 2-ում ներկայացված է Ընկերության կողմից 2019 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 2
(հազ. դրամ)

1	2019 թվականի ներդրումային ծրագրով հաստատված ներդրումների ընդհանուր ծավալը	5 105,0
2	2019 թվականի ընթացքում իրականացված և ավարտված ներդրումների ծավալը	3 431,3
3	2019 **թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով (ծառայության վճարով) փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	3 431,3

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 3-ի №75Ա որոշումը «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»

Հաշվետվություն - «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2019 թվականին երրորդ եռամսյակի փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 28-ի №01/221-19 գրությամբ ներկայացված հաշվետվություն